

յիշատակուած չէ թէ ամուսնացած էր կամ թէ զաւակներ ունէր:

Յակոբ քահանայի այս վերջին աւետարանը որոշ կերպով ինքը ծաղկած է, որ ըստ ցուցակագիր Լալայեանի ձեռագիրը ունէր «Սկզբնատուք թռչնագրեր: Լուսանցազարդ գունաւոր զարդեր: Մանրանկարք 15-4 աւետարանիչները, ոսկեղօծ: Խորանք 10: Կիսախորանք 4⁽²⁷⁾»:

Դժբախտաբար առ այժմ ասկէ աւելի բան մը չեմ կրնար ըսել Յակոբի կեանքին կամ գործերուն մասին:

Յանուանէ ուրիշ ծաղկողներ ինծի ծանօթ չեն Բուենց զարոյցէն: Սակայն կան ձեռագիրներ, ինչպէս Մարտիրոս քահանայի 1582ին գրած Աւետարանը՝ որ ունէր «Սկզբնատուք գունաւոր թռչնագրեր: Լուսանցազարդ գունաւոր ծաղկներ և զարդեր: Մանրանկարք 4 աւետարանիչներ: Խորանք 7: Կիսախորանք 4⁽²⁸⁾»: Սակայն զժբախտաբար մանրանկարներուն հետնաեւ մանրանկարիչ-ծաղկողը կը մնայ ինծի անծանօթ: Իսկ Մարտիրոս քահանայի 1582ին գրած երկրորդ Աւետարանին զարդերուն և մանրանկարներուն մասին այդքան ալ ծանօթութիւն չունինք:

(Շարունակելի)

Յ. ՔԻՒՐՏԵԱՆ

⁽²⁷⁾ Գրացուցակ Հայերէն Ձեռագրաց վարչութիւն, Երևան, էջ 863.

⁽²⁸⁾ Անդ, էջ 695.



ԱՐՏԱԽԱԶԴ Գ.

ԵՒ

ՀՈՌԹԵԱԿԱՆ ԴԱՒԱՃԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

Հին Հայաստանի Արտաշէսեան թագաւորութեան գերագնիւ դէմքերէն մին էր Արտաւազդ Գ. թագաւորը (55-34 Ն. Ք.): Իբր Տիգրան Մեծի որդին՝ ան վառահեղ դէմք մըն է ու իբր գրասէր ու մատենագիր՝ անմահացած է յոյն գիտնականներու ու օտար պատմագէտներու գովեստներով:

Արտաւազդ Գ.ի դահակալութեան թրւականը մեզի կ'աւանդէ Կիլիկիոն, հռովմայեցի նշանաւոր ճարտասանն ու մատենագիրը, երբ կ'ըսէ թէ Քրիստոսէ առաջ 54 թուականին Կրասոսի արեւելք հասնելուն՝ Հայաստանի դահին վրայ կը գլուխէր Արտաւազդ թագաւորը: Իսկ Տիգրան Մեծի մասին խօսելով Կիլիկիոն, 56 թուականի փետրուար ամսոյն իր մէկ ճառին մէջ արտայայտուած է ըսելով. «Դեռ կը թագաւորէ նա»: Ուրեմն որոշ է թէ Արտաւազդ Գ. դահակալած էր 55 թուականին (Ն. Ք.):

Մեմնոն ու Պլուտարքոս կը պատմեն թէ իր հօր կենդանութեան շրջանին՝ Արտաւազդ պահ մը դահակից եղած էր իրեն: Այս կրնայ պատահած ըլլալ Տիգրանակերտի պատերազմէն վերջ՝ երբ ընկճուած ու յողմած ծերունի Մեծն Տիգրան օգնականի մը պէտքը ունեցած էր 69 թրւականին, ու քիչ վստահութիւն ունէր Պոնտոսի ռազմադէտ՝ բայց աննկարագիր ու խորամանկ Միհրդատ Եւպատոր թագաւորին վրայ:

Լանկլուա նոյնիսկ կը յիշատակէ դրամ մը գոյութիւնը, որուն վրայ կ'երեւին Տիգրան Մեծի եւ Արտաւազդ Գ.ի խոյ-

րակիր զոյգ գլուխները՝ յունատառ «Վա-սիլէոս Տիգրանու» (թագաւորին Տիգրանայ) բառերով, որ փաստ մըն է թէ ան դահակից եղած էր իր օգոստափառ հօր:

Արտաւազդ Գ. ուսումնասէր ու մտաւորական նշանաւոր հայ թագաւոր մըն էր: Պատանեկան տարիներուն, իր մեծազօր հայրը՝ Հայաստանի արքունիքը հրաւիրած էր նշանաւոր յոյն գիտնականներ, որոնք Արտաւազդի դաստիարակներն ու առօրեայ մտերիմները եղած էին: Այս պատճառաւ, տաղանդաւոր հայ արքայորդին սկսաւ ինքն ալ արտադրել գրական, թատերական ու պատմական հատորներ, որոնք պահուած էին մինչեւ երկրորդ դար: (Տես Պլուտարքոս, Զուգակշիռ - «Կրասոս»): Ուրիշ տեղ մը Պլուտարք կը գրէ հետեւեալները. «Արտաշէսեան շրջանին գրեթէ բոլոր հայ բարձր դասակարգին մէջ գոյութիւն ունէր գրական մշակուած ճաշակ մը, ու այս կը հաստատուի Տիգրանակերտի ու Արտաշատի մէջ կատարուած կրկնակ թատերախաղերով (Անդ, «Կրասոս» եւ «Լուկուլլոս»):

Մինչ իր հայրը կը թագաւորէր՝ Արտաւազդ հանգիստ կեանք կը վարէր ու կրնար զբաղիլ իր սիրելի գրական ուսումնասիրութիւններով, բայց երբ հօրը մահուան վերջ՝ ամբողջական Մեծ Հայքի դահը իրեն մնաց, ստիպուեցաւ սուրբ ձեռք առնել ու խառնուիլ Հռոմ-Պարթեւական վէճերուն:

Իր օրով՝ Հայաստանի անմիջական դըրացիներն էին Հռովմէական ու Պարթեւական պետութիւնները, որով կը ստիպուէր զորք ունենալ մէկուն կամ միւսին հետ, երբ այդ երկու պետութիւնները իրարու դէմ պատերազմէին:

Արտաւազդէն առաջ, Հայաստանի թագաւորները աւելի հանգիստ էին այս տեսակետով, որովհետեւ Հայաստանի թիկունքը գոյութիւն ունէին Փոքր-Ասիական քանի մը անկախ կամ կիսանկախ թագա-

ւորութիւններ ու Պոնտոսի պետութիւնը, որոնք պատուարներ էին Հռովմի դէմ: Իսկ Հայաստանի հարաւային սահմաններուն կից գտնուող Սելեւկեան պետութիւնը՝ գեղեցիկ պատուար մըն էր պարթեւ աշխարհակալներու դէմ, որով Հայաստան կրնար բաղդատաբար խաղաղ ու ապահով ըլլալ թէ՛ Հռովմէական ու թէ՛ պարթեւական ասպատակութիւններու դէմ:

Արտաւազդի օրով՝ չուրջի անկախ թագաւորութիւնները ջնջուած էին, ու Հայոց թագաւորը կը նկատուէր համակ Առաջակողմեան Ասիոյ զօրաւորագոյն թագաւորը, բայց հակառակ այս կացութեան շատ դժուար էր չափուիլ Հռոմի ու Պարթեւաստանի դէմ միասնաբար, ինչպէս կը բացատրէր նոյնիսկ հռոմէասէր Պլուտարքոսը:

Ստեպ կը պատահէր որ Հայոց թագաւորը հակէր Հռոմի կամ Պարթեւաստանի կողմը. սակայն այս ընթացքը երկու պետութիւններէն մին բարեկամ՝ բայց միւսը թշնամի կ'ընէր իրեն:

Երբ դեռ Հռոմ Արեւելքի մէջ գերակշիւ դիրք մը չունէր, Հայաստան առանձին կրնար չափուիլ ու յաղթել Պարթեւաստանին, բայց երբ Հռոմ սկսաւ Արեւելքի մէջ զօրանալ, Հայաստանի թագաւորները երբեմն կը ստիպուէին անոր փափաքները կատարել: Ու այսպէս, Մեծն Տիգրանի մահէն վերջ, Հայաստան երկու հօր պետութիւններուն միջեւ կռուախնձոր մը եղաւ (ըստ Ստրաբոնի):

Հայաստանի թագաւորները ընդհանրապէս կը փափաքէին Հռոմի կողմը հակել, բայց հակառակ ասոր՝ Հռոմի ապերախտ զօրավարները միշտ կը ջանային Հայոց թագաւորը պատասխանատու բռնել, երբ իրենք պարթեւներէն պարտուէին: Երբեմն այնքան կը ստորնանային, որ բարեկամական ձեւերու տակ ու եղբայրական համբոյրներէն յետոյ՝ Հայոց թագաւորները կը ձերբակալէին եւ անոնց կեանքին դէմ

ալ կը դաւաճանէին: Ասոր լաւագոյն օրինակը կրնայ ծառայել Հոռմի Եռադետ Անտոնիոսի թշնամական դերքը Արտաւազդի հանդէպ:

Կիւերոն անգամ կ'ընդունի որ Արտաւազդ Գ. բարեկամ էր Հոռմէական պետութեան: Արտաւազդ այս բարեկամութեան համար էր ստուգել որ իր գեղանի դուստրը կնութեան տուաւ Գաղատիոյ Դիոդորոս հոռմէասէր թագաւորին: Արտաւազդի նման դադափարական անձ մը գիտէր յարգել իր հօր եւ Պոմպէոսին միջեւ 66ին կնքուած բարեկամական դաշինքը, որով Հայաստանի թագաւորութիւնը բարեկամ նկատուած էր Հոռմի Հասարակապետութեան:

Արտաւազդ Գ. սկզբունքով կ'ատէր Պարթեւները, որոնք ամէն առիթներով կը փափաքէին յափշտակել Հայաստանի դաւնազան սահմանակից դաւառները:

Արտաւազդ Գ. իր թագաւորութեան Դրդտարին պատերազմած ու փայլուն յաղթանակ մը տարած էր Պարթեւներուն դէմ: Իր այս յաղթութեան առիթով էր որ կոխել տուած էր արծաթ դրամ մը որ իր յաղթական վերադարձը կը խորհրդանշէր: Այսպիսի դրամ մը գտնուած է արդէն, բայց թերեւս ուրիշներ ալ կըրնան գտնուիլ, որոնցմով կը տեղեկանանք Արտաւազդի անծանօթ յաղթանակներուն:

Այս դրամները արծաթ էին ու նուրբ ձեւով կոխուած: Անոնց վրայ Արտաւազդ կ'երեւի եռաձի կամ քառաձի կառքին մէջ կանդնած վիճակով ու յաղթանակի նսեհ ի ձեռին կը սուրայ դէպի նոր յաղթանակ, կամ կը վերադառնայ յաղթական: Դրամին երկրորդ երեսին վրայ կ'երեւի իր անմօրուս սիրուն դէմքը, արքայական բարձր խոյրը գլուխը դրած, ու չուրջը յունարէն գրուած հետեւեալ արձանագրութիւնը. «Արքայից Արքայ Արտաւազդին»:

Արտաւազդ Գ. իր Պարթեւները ատող,

օգնութեան փութացած էր Կրասոս Եռապետին, երբ այս վերջինը 54ին Ասորիք եկած էր: Այս կերպով փափաքած էր Պարթեւները տկարացնել: Շատ սխալ է, երբ Արտաւազդ Գ.ին համար կ'ըսուի թէ ան խաբած է Հոռմը: Դժբախտութիւն մ'է քանի մը պատմադիրներու սխալ կարծիքը Արտաւազդի մասին:

Երբ Կրասոս Եռապետը Ասորիք հասաւ, Արտաւազդ իր անձնապահ 6000 ձիաւորներով այցելութիւն տուաւ անոր ու իրը խոհուն անձ ու իրը դաշնակից Հոռմի՝ շատ օգտակար խրատներ տուաւ Հոռմայեցի Եռապետին՝ առաջարկելով որ Հոռմէական բանակը անցնէր Հայաստանէն, ուր Հայոց թագաւորը օգնութեան պիտի փութար 10,000 հեծեալ ու 30,000 հետեւակ եւ 6000 սպառազէն ձիաւորներով: Արտաւազդ նոյնիսկ առաջարկեց հայկական բանակին սպարապետութիւնը անձամբ վարել: Ասով, Արտաւազդ բացի ռազմական օգնութենէ, Հոռմայեցի Եռապետը իր բովանդակ բանակով Հայաստան կը հրաւիրէր, հոն առատօրէն վայելելու համար ուտեստեղէնն ու պարէնը, որքան ժամանակ որ Հոռմայեցիք փափաքէին:

Կրասոս սկիզբները շնորհակալ եղաւ Արտաւազդին, բայց աւելի փափաքելով իր նախապատրաստած անձնական ծրագրին հետեւիլ, որոշեց առանձին յարձակիլ Պարթեւներու դէմ: Այս կերպով ան յազուրդ տալ ուղեց իր փառասիրութեան, որովհետեւ իր պատերազմները առաջին բախումներն էին Հոռմա-պարթեւ կռիւներուն (ըստ Պլուտարքոսի):

Կրասոս 53ին Եփրատը անցնելով՝ միայնակ մտաւ Միջագետք ու յարձակեցաւ Պարթեւներու վրայ: Պարթեւները մեծ պատրաստութեամբ իրենց հօր բանակը երկու մասերու բաժնած էին: Առաջին մասին կը հրամայէր Պարթեւներու Որդ թագաւորը, որ նախ ուղղակի Հայաստան արշաւեց՝ իր Հոռմի դաշնակից երկրին:

Երկրորդ բանակը Սուրէնի առաջնորդութեամբ ու արաբացի օժանդակ իշխաններուն օգնութեամբ գրոհ տուաւ Կրասոսի վրայ՝ զոր առանձին գտնելով մեծ վրտանդի մատնեց: Կրասոս ստիպուեցաւ անջրդի անապատներուն մէջէն անցնիլ ահեղի կորուստներով:

Արտաւազդ այդ պահուն կը կռուէր Ուրդ թագաւորին դէմ: Իսկոյն դեսպաններ առաքելով՝ խմացուցած էր Կրասոսին, որ պիտի չկարենար անձամբ օգնութեան փութալ իրեն, քանի որ պարթեւները Հայաստան մտնելով՝ իրեն հետ կը կրուէին: Հայ դեսպանները միանգամայն թելադրեցին որ Կրասոս դէպի հիւսիս նահանջէ եւ պատերազմը փոխադրէ Հայկական հողին վրայ, որպէս զի հոն, միացեալ ուժերով յաղթեն Պարթեւներուն:

Կրասոս չզիջաւ հետեւիլ Հայոց թագաւորին խորհուրդներուն, ու փոխանակ իր ռազմական սխալը սրբադրելով՝ բերանացի ըսած է դեսպաններուն. «Ժամանակ չունիմ Հայերով զբաղելու, բայց երբ Պարթեւներուն հետ հաշիւս վերջացնեմ՝ այն ատեն միայն Հայաստան պիտի դամ Արտաւազդը պատմելու համար» (ըստ Պլուտարքոսի):

Ահաւասիկ ահագին խեղաթիւրում մը: Սակայն ինչ պատճառաւ...: Որովհետեւ Կրասոս պարտուած էր Պարթեւներէն, ու հոռմէական ընդունուած սովորութեամբ՝ իր պարտութիւնը կը փափաքէր վերադրել դաւաճանի կամ մատնիչի մը խաղերուն՝ որպէս զի ծերակոյտին առջեւ ամօթով չմնար:

Նոյն դռհիկ ստորնութիւնը քիչ վերջ պիտի գործադրէր նաեւ Կրասոսին յաջորդող Անտոնիոս եռապետը:

Երբ Արտաւազդի դեսպանները Հայաստան վերադառնալով Կրասոսի ընթացքը պատմեցին Հայոց թագաւորին, Արտաւազդ շատ տրտմեցաւ, ու իսկոյն հաշտութիւն կնքեց Պարթեւներուն հետ: Իր

քոյրերէն մին կնութեան տուաւ Պարթեւ թագաւորին: Այս առթիւ մեծ խնձոքներ կատարուեցան ու յունական դասական թատերախաղեր սարքուեցան Հայաստանի մայրաքաղաք Արտաշատի մէջ:

Արտաւազդի ընթացքը բնաւ դատապարտելի չէր: Ան, բնականաբար, պէտք էր իր հայրենիքին շահերը պաշտպանել, ու ապահովել իր ժողովրդեան անդորրութիւնը: Դատապարտելին միայն Հոռմայեցի եռապետն էր, որ այնքան անարգած ու անպատուած էր Հայոց թագաւորը: Նման պարադայի մը տակ, հոռմայեցիները շատ աւելի «դաւաճանական» միջոցներու պիտի դիմէին ու իրականապէս դաւաճաններ պիտի ըլլային, ինչ որ յաճախ կը հանդիպին հոռմէական պատմութեան մէջ:

Եթէ Կրասոս հետեւէր Հայոց թագաւորին խորհուրդներուն, թէ՛ պատերազմը պիտի չահէր եւ թէ՛ պիտի փրկէր Հայկական ու հոռմէական բանակին սպառնացող վտանգը: Բայց ճիշտ հակառակը պատահեցաւ: Կրասոսի անհեռատես ամբարտաւանութիւնը 30,000 Հոռմայեցիներու կորստեան պատճառ եղաւ, ու եռապետը խողխողուեցաւ Պարթեւներու ձեռքով: Կրասոսի գլուխը կտրուելէ առաջ, Պարթեւները նախ անոր որդւոյն գլուխը կտրելով՝ գնտակի նման նետեցին իր հօր առջեւ... յետոյ կարեցին նաեւ Կրասոսի գլուխը: Սուրէն ինք անձամբ կտրեց անոր գլուխը ու նուէր դրկեց Պարթեւ թագաւորին որ այդ միջոցին Արտաւազդ Գ.ին այցելութեան գացած էր Հայաստան: Երբ Կրասոսին գլուխը Հայաստան հասաւ, ճիշտ նոյն օրը հարսանեական հանդէսներու առիթով, Արտաշատի մէջ կը բեմադրուէր Եւրիպիդէսի «Դիոնիսեանները»:

Յատն Տրալլացի դերասանը, Կրասոսի գլուխը բերնի ճեղքերէն բռնելով՝ հանդիսականներուն դարձաւ ու աղաղակեց.

«Ահա մենք մեր տունը բերինք լեռան վերայ սպաննուած եղնիկ մը... զոր յաջողագէտ որսացինք»:

Հայոց ու Պարթեւաց զոյգ թագաւորները ու համակ հայ-պարթեւ հանդիսականները որոտընդոտ ծափերու եւ ուրախութեան բացազանջութիւններու մէջ շնորհաւորեցին դերասանը, որ այսպէս Ներիպիդէսի ողբերգութեան կու տար իրական ու չօչափելի աղղու վախճան մը: (Տես Կիկերոն եւ Պլուտարքոս):

Հոռմի ու Պարթեւներու այս պատերազմներուն շարունակութեան մէջ Արտաւազդէ չէզոք մնաց ու հոռմէական կաթիլ միակ արիւն թափուելուն պատճառ չեղաւ: Պարթեւները իրենց յաղթական արշաւանքները շարունակելով՝ յարձակեցան Ասորիքի ու Պարսկաստանի վրայ: Արտաւազդէ շարունակեց պահել իր չէզոքութիւնը: Ո՛չ մէկ լուրջ պատմադէտ կը խօսի Արտաւազդի մասնակցութեան մասին: Նոյնիսկ կասկածոտ Կիկերոնը, որ պահ մը վախճալով թէ Արտաւազդէ կրնար Կապադովկիոյ վրայ յարձակիլ, ու այս պատճառով՝ օգնութեան փութացած էր Կապադովկիացւոց՝ Արտաւազդի երեւակայան յարձակման դէմ դնելու համար, երբ վերջէն իսկապէս նշմարեց Արտաւազդի չէզոք ընթացքը՝ յայտարարեց որ «Հայը չէզոք կը մնար, ու չէր փափաքեր տրամադրուիլ ո՛չ Պարթեւներուն եւ ո՛չ Հոռմի շահերուն»:

ՆՈՒՊԱՐ ՄԱԳՍՈՒՏԵԱՆ
(Շարունակելի)

(¹) Ապետիք ինքզինքը պարսկահայ կաթողիկէ կը դասնէր ու կը գրէր, նոյնպէս նաեւ զանազան պաշտօնական տեղերը. Վիեննայի Ռազմական բարձրագոյն խորհուրդի թուղթերու մէջ այսպէս գրուած է «Petrus Bedik Persianer» (Prot. Exp. 1677, f. 634) - «Petrus de Bedik Persianer» (1677, fol. 630). - «der

ԱՊԵՏԻՔ ԿՈՄՍԻ ԶԱՐՄԱՆԱԼԻ ԿԵԱՆՔԸ

(Շար. տե՛ս «Բագմավէպ» 1946, էջ 306)

ԳԼՈՒԽ Գ.

ՄԱՆԿՈՒԹԻՒՆ ԵՒ ԳԱՂԹ

... Փոքր Ասիոյ մէջ Միջերկրականէն 125 քիլոմետր հեռու, հին, պատմական շատ փոփոխութիւններ տեսած, առեւտրական շարժումով լի քաղաք մը կայ: Այս քաղաքն է Հալէպ: Հիւսիսէն հարաւ, Արեւելքէն դէպի Արեւմուտք անապատները կարող բանուկ ճամբաներու խաչաձեւում մը ունի, որոնց վրայէն յամրաքայլ ուղտեր կը տանին ու կը բերեն վաճառքներով լեցուն սնտուկներ: Քաղաքին մէջ տեղապահ գունդերու մեծ զօրանոց մը կայ: Հալէպ 1516էն ի վեր Օսման ձեռքերու մէջ է. բայց քաղաքին բնակչութեան մեծ մասը քրիստոնէայ հայերը կը կազմեն:

Որպէս զի Հալէպի, և ընդհանուր կերպով այդ գաւառներու բնակչութեան գաղափար մը կազմենք՝ պէտք է յիշել անոր զարմանալի խառնուրդը, քրիստոնէութեան և իսլամութեան: Հոն իշխանութեան զուխ եղող մուսուլմաններու քով՝ կ'ապրէին ամէն տեսակ քրիստոնեաներ. սիւրիացիներ, պարսիկներ, մարոնցիներ, յունաղաւաններ, յոյն ու հայ կաթողիկէներ, ու մինչեւ իսկ մանր աղանդներն ունէին իրենց ներկայացուցիչները: Քարակէօզ ընտանիքը, որմէ Պետրոս Ապետիք կը սերի - ինչպէս պիտի անդրադառնանք - կը պատկանէր պարսկահայ կաթողիկէ հասարակութեան (¹): Անոնք

Persianische Gesandte... Petrus Abedik» (Prot. Registr. 1677, f. 488) - «dem Persianer Peter Bedik» (1680. V. 15), և այլն: Հունգարական վաւերացութիւնը ու կոմսական գինանշանն ալ կը կրկնեն իր պարսկահայ ծագումը, երբեմն «Persa-Armenusak» ալ կը գրեն:

ամէնքը իրենց վաղեմի սերունդներով միշտ քրիստոնէայ մնացած են. այդ զինուած մահմետական ծովին մէջ, կրելով հանդերձ հալածանքներ՝ ուժեղ կղզիներ ձեւացուցած են: Քրիստոնէութիւնը ճիշտ Ապետիքներու, լաւ եւս Քարակէօզներու Արշակունի թագաւոր-նախնիքներու ձեռքով տարածուած է Տիգրիսի և Եփրատի ափերուն վրայ: Նետուրական ժամանակագրութիւններու մէջ յիշատակութիւններ կը գտնենք այս թագաւորներու և Պարսկաստանի մէջ՝ գոյութիւն ունեցող քրիստոնեաներու յարաբերութիւններու մասին: Կը գրէ Մահրի Իպն Սիււլէյման ալ՝ թէ այս խաղաղ յարաբերութիւնները Արշակունիներու շրջանին երթալով կը զօրանային: Վերը յիշուած ժամանակագրութիւններէն յայտնի է որ Պարսկաստանի մէջ մեծ աղղեցութիւն ունէին քրիստոնէայ հայերը, որոնք յետոյ սակայն հալածանքներու ենթարկուեցան իշխանութեան հասած Սասանեաններու կողմէն: Այս հալածանքները այն տառն միայն դադարեցան - եթէ ժամանակակից քրիստոնէական աւանդութիւններու և ժամանակագիրներու կարելի է պատմական ստուգութիւն մը ընծայել - երբ Պարսկաստանի քրիստոնեաներու Պատրիարքը՝ լուսնոտութենէն հրաշքով բժշկեց դահակալող թագաւորին աղան:

Այսօր այլեւս որոշ է (վերի թագաւորին անունը յիշուած չէ ժամանակագիրներու քով) որ Պարսկաստանի մէջ միայն Գ. դարուն կարելի է բուն քրիստոնէութեան մասին խօսիլ, ինչպէս կ'աւանդեն մեզի Միջին դարու ասորի ժամանակագիրներն ալ: Ասորեստանի ու Քաղէաստանի աստուածաշնչական սահմաններու մէջ արդէն Գ. դարուն ալ քրիստոնէութիւն կար, սակայն աւելի ուշ՝ Նիւսիայէն սկսաւ տարածուիլ քարոզչութիւն մը, որ, ասորիներու համաձայն, մարոնցիներու արդիւնքն է: Թէ արդեօք պարսկական դահակալ հարստութիւնը, այսինքն Արշակունիները, ու հոս բնակող հայութիւնը երբ և ինչ պարագաներու բերումով

քրիստոնէութիւնը ընդունած են, պատմական ամէնէն արդի խուզարկութիւններն իսկ չեն կրնար ճշգրիտ պատասխան մը տալ: Ամէն պարագայի մէջ, ինչպէս անգլիացի պատմագիրներն ալ կ'ըսեն, օր. J. Labourt, հաւանական կը կարծուի որ Պարսկաստանի մէջ Արշակունիներու օտար ծագում ունենալը՝ պատճառներէն մէկը եղած ըլլայ քրիստոնէութեան հանդէպ իրենց ցոյց տուած բարեացակամութեան որ կամաց կամաց արեւակցական զգացումի մը փոխուեցաւ: Ասոր հակառակ հոն ծլած Սասանեաններու հարստութեան մոլեռանդութեան հետեւանքով սկսան հալածանքները, որոնք քրիստոնէայ հայերու մէկ մասը շրջակայ երկիրները ցրուեցին յաջորդ դարերու ընթացքին: Արշակունիներու ցոյց տուած «համբերատար ու բարեացակամ» վարմունքը բոլոր կրօնքներու հանդէպ՝ ժամանակները կանխող մարդասիրական հոգիի ու քաղաքակրթութեան վկաններ են:

Թէ արդեօք վերոյիշեալ հայ գաղութներէն մը խումբին կը պատկանէին Պետրոս Ապետիքի նախնիքները, որոնք հնուց ի վեր պահէր էին իրենց քրիստոնէութիւնը, կարելի չէ այսօր որոշ կերպով հաստատել: Միմիայն Պետրոս Ապետիքի գրութիւններու վրայ հիմնուելով կրնանք ցոյց տալ թէ նախկին դարերուն մէջ ուր յայտնուեց են իր քրիստոնէայ նախնիքները: Ինքը վկայութեան կը կոչէ Կալիստոս Նիկեփորոսը և Ս. Գրիգոր Սուրբաղիի կենսագրութիւնը, որոնց մէջ կը խօսուին Արշակունիներու մասին: Կը պատմէ նոյնպէս թէ իր նախնիքները ցրուած էին, և թէ բարբարոս սկիւթացիներէն աւերուած էր հայկական մայրաքաղաքը Անին, ուր անոնք բնակած էին: Իբր աղբիւր կը յիշէ Պետրոս Բելլոնիոս Կենումանոսը: Շահ Աբաս Ա, ուզելով ազատիլ դարերէ ի վեր իսլամ լուծին տակ ձնչուած ու մեծ զանգուածներ կազմած քրիստոնեաներու տեղափոխութիւններէն ու ապստամբութիւններէն, անոնցմէ երեւելի ու աղղեցիկ ընտանիքներու անդամները իսպահան կանչեց: Նոյն